Հաշվետվություն

2026 թվականի մայիսի 18-ից 20-ը Բելգիայի Թագավորություն (Օստենդ) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**
   Արամ Գուգարաց, Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ,
   Միեր Խաչատրյան, Կադաստրի կոմիտեի գլխավոր քարտուղար,
   Մարինե Սահակյան, Կադաստրի կոմիտեի արտաքին կապերի վարչության պետ
   Ռուզաննա Խաչատրյան, Կադաստրի կոմիտեի ղեկավարի օգնական:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Բելգիայի Թագավորություն (Օստենդ), 2026 թվականի մայիսի 18-ից 20-ը:

3. **Հրավիրող կողմը.**
   «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիա:

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի գլխավոր ասամբլեային:

5. **Քննարկված թեմաները.**
   Գլխավոր ասամբլեայի շրջանակներում քննարկվել են «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի գործունեության և զարգացման ռազմավարական ուղղություններին վերաբերող հետևյալ հարցերը.
   - 2026 թվականի «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի գլխավոր ասամբլեայի օրակարգի հաստատում,
   - Կառավարման խորհրդի կողմից ներկայացված գործունեության տարեկան հաշվետվության քննարկում,
   - «Եվրոգեոգրաֆիքս» միջազգային ասոցիացիայի ոչ առևտրային կազմակերպության (AISBL) 2025 թվականի ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և հաստատման գործընթաց,
   - 2026 թվականի գործառնական ծրագրի, բյուջեի և անդամավճարների վերաբերյալ առաջարկությունների քննարկում,
   - Կառավարման խորհրդի անդամների և «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի նախագահի թեկնածությունների ներկայացում և ընտրական գործընթացների կազմակերպում,
   - անդամ կազմակերպությունների միջև համագործակցության խորացման և փորձի փոխանակման մեխանիզմների ընդլայնում,
   - երկրատարածական տեղեկատվության կառավարման ոլորտում եվրոպական մակարդակով միասնական մոտեցումների և քաղաքականությունների

զարգացման ուղղությունների մշակում,

- թվայնացման, տվյալների փոխգործունակության և նորարարական տեխնոլոգիաների կիրառման ընդլայնման հարցերի քննարկում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Գլխավոր ասամբլեան՝ որպես «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի առանցքային միջոցառում համախմբել է անդամ պետությունների քարտեզագրման, կադաստրի և երկրատարածական տեղեկատվության կառավարման լիազոր մարմինների ղեկավարներին և բարձրաստիճան ներկայացուցիչներին:

Միջոցառման ընթացքում քննարկումները կենտրոնացած են եղել «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի ռազմավարական առաջնահերթությունների, անդամ կազմակերպությունների միջև համագործակցության ընդլայնման, ինչպես նաև երկրատարածական տվյալների կառավարման ոլորտում եվրոպական միասնական մոտեցումների ձևավորման շուրջ:

Քննարկումների շրջանակում մասնակիցների կողմից մասնավորապես կարևորվել են՝

- ազգային երկրատարածական տվյալների ենթակառուցվածքների զարգացման և արդիականացման անհրաժեշտությունը,
- երկրատարածական տվյալների փոխգործունակության և հասանելիության ապահովման ուղղությամբ միասնական մեխանիզմների ներդրումը,
- թվային փոխակերպումների և նորարարական տեխնոլոգիաների կիրառման ընդլայնումը պետական կառավարման համակարգերում,
- միջազգային մասնագիտական փորձի փոխանակման խորացումը անդամ կազմակերպությունների միջև,
- եվրոպական մակարդակում համագործակցության և համակարգված քաղաքականությունների ամրապնդումը,
- գեոդեզիական, քարտեզագրական և կադաստրային համակարգերի զարգացման ուղղությամբ համատեղ նախաձեռնությունների խթանումը:

Գլխավոր ասամբլեայի շրջանակներում պատվիրակության ներկայացուցիչները մասնակցել են աշխատանքային քննարկումներին՝ ոլորտային փորձի փոխանակման համատեքստում ներկայացնելով ՀՀ կադաստրի համակարգում իրականացվող բարեփոխումների ընթացքն ու սահմանված առաջնահերթությունները:

«Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի 2027 թվականի Գլխավոր ասամբլեան Երևանում անցկացնելու առնչությամբ Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալը ներկայացրել է ՀՀ-ի մասին պատմող, Հայաստանի պատմամշակութային հուշարձանները, տեսարժան վայրերը նկարագրող շնորհանդես: Ներկայացվել է միջոցառման անցկացման վայրը, անդրադարձ է կատարվել միջոցառման նախապատրաստական աշխատանքների ընթացքին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից Գլխավոր ասամբլեայի բարձր մակարդակով կազմակերպման և պատշաճ հյուրընկալության ապահովման ուղղությամբ իրականացվելիք քայլերին:

Գլխավոր ասամբլեայի շրջանակներում Կադաստրի կոմիտեի պատվիրակության անդամներն առանձին հանդիպումներ են ունեցել միջոցառմանը մասնակցող պատվիրակությունների ներկայացուցիչների հետ: Հանդիպում է տեղի ունեցել նաև Եվրոգեոգրաֆիքս ասոցիացիայի գլխավոր գրասենյակի ներկայացուցիչների հետ, որի ընթացքում քննարկվել են 2027 թվականին Հայաստանում նախատեսվող Գլխավոր ասամբլեայի կազմակերպման ընթացակարգային, տեխնիկական հարցերը:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Գլխավոր ասամբլեայի ընթացքում հաստատվել են «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի 2025 թվականի ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև 2026 թվականի գործառնական ծրագիրը, բյուջեն և անդամավճարների վերաբերյալ առաջարկությունները:

Ասամբլեայի շրջանակներում իրականացվել են «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի կառավարման խորհրդի անդամների և նախագահի ընտրական գործընթացները, ներկայացվել են թեկնածությունները, անցկացվել են համապատասխան քվեարկություններ և ընդունվել կառավարման մարմինների ձևավորմանն առնչվող որոշումներ:

Բացի այդ, քննարկվել և հաստատվել են ասոցիացիային նոր անդամ կազմակերպությունների անդամակցության վերաբերյալ հարցեր, ինչը միտված է միջազգային մասնագիտական համագործակցության ընդլայնմանը և ոլորտային փոխգործակցության ամրապնդմանը:

Միջոցառման ընթացքում անդամ կազմակերպությունների միջև ձեռք են բերվել պայմանավորվածություններ հետագա համագործակցության, փորձի փոխանակման և համատեղ նախաձեռնությունների իրականացման ուղղությամբ:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Բելգիայի Թագավորություն կատարած այցը հնարավորություն է ընձեռել ծանոթանալու եվրոպական երկրատարածական տեղեկատվության կառավարման ոլորտում ընթացող նորարարական զարգացումներին, անդամ կազմակերպությունների գործունեության առաջնահերթություններին և ոլորտային համագործակցության ընդլայնման հնարավորություններին:

«Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի 2026 թվականի Գլխավոր ասամբլեային մասնակցությունը կարևոր նշանակություն ունի միջազգային մասնագիտական համագործակցության ամրապնդման, փորձի փոխանակման և ոլորտում կիրառվող լավագույն փորձի ուսումնասիրման տեսանկյունից:

Գլխավոր ասամբլեային մասնակցությունը միաժամանակ հնարավորություն է տվել ուսումնասիրելու միջոցառման կազմակերպչական, արարողակարգային և տեխնիկական գործընթացները, պատվիրակությունների ընդունելության և

հանդիպումների կազմակերպման ձևաչափերը, ինչպես նաև հյուրընկալող կողմի կողմից կիրառվող աշխատանքային մեխանիզմները՝ 2027 թվականին Հայաստանի Հանրապետությունում կայանալիք Գլխավոր ասամբլեայի բարձր և պատշաճ մակարդակով կազմակերպումն ապահովելու նպատակով:

Հաշվի առնելով Գլխավոր ասամբլեայի մասնակիցների և այցելուների լայն շրջանակը՝ միջոցառումը նաև կարևոր հնարավորություն է հանդիսացել ոլորտի առաջատար մասնագետների, նորարարական լուծումների հեղինակների և նորագույն տեխնոլոգիաների կիրառման հաջող փորձ ունեցող ներկայացուցիչների հետ մասնագիտական կապերի հաստատման և համագործակցության նոր հնարավորությունների ձևավորման տեսանկյունից:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Արամ Գուգարաց

Միեր Խաչատրյան

Մարինե Սահակյան

Ռուզաննա Խաչատրյան

25 .05.2026 թ.